ՄՏԵՐՄԻԿ ԹԱՏԵՐԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Հալեպում ծնված, Երևանի թատերական ինստիտուտում ստացած դերասանական կրթությունը Հրաչյա Ղափլանյանի հիմնադրած դրամատիկական և Ալեքսանդր Գրիգորյանի գլխավորած «Արշալույս» երիտասարդական-նորարարական թատրոններում, հեռուստառադիոպետկոմի գրական-թատերական հաղորդումներում և «Հայֆիլմ»-ի նկարահանման հարթակներում գործնականում թրծած ՄԱՐԻ ՌՈԶ ԱԲՈՒՍԵՖՅԱՆՆ անցյալ գարնանն անակնկալ հայտնվեց մշակութային հետաքրքրություններիս տիրույթում։ Իր հեղինակած «Գրիգոր Զոհրապ. Գողգոթայի ճանապարհին» մենախաղով դաջվեց մտապատկերումս մաքրամաքուր մայրենիի մատուցման մեզանում կորսվող բարձր արվեստով և կերպավորման երփնապնակի զուսպ ու խորունկ արտահայտչականությամբ։

Պատմական անարդարությանը չհամակերպվող հայուհին

1983-ից Սան Ֆրանցիսկոյում մշտական բնակություն հաստատած, Հայ դատի աննկուն պաշտպանի թատերաելույթները (Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը» և Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզները») հախուռն ջերմությամբ էին 2002-ին ընդունել Երևանի և Ստեփանակերտի արվեստասերները: Երկու տարի անց դերասանական շնորհներին հավասար գնահատել էին գրականության խորագիտությունը, երբ Վարպետի «Աֆորիզմներ», Վիգեն Իսահակյանի «Հայրս» և Ավիկ Իսահակյանի «Ավետիք Իսահակյան. գիտական կենսագրություն» գրքերից քաղած նյութի ներդաշնակմամբ իմաստալից մի թատերապատում էր ներկայացրել Սունդուկյանի անվան մայր բեմում (այժմ՝ «ազատ» թատերահարթակ): Մինչ Գրիգոր Զոհրապի ու Վարդգես Սերինգուլյանի եղերական վախճանի կենսաթրթիռ վերապրումը հմայել էր Պարույր Սևակի և Սուլամիթայի մեծ սիրո գաղտնարանի բարեկիրթ ու զգայացունց թատերամեկնաբանությամբ: Հիմա մուսալեռցիների վերֆելյան հերոսապատումի կորովն էր ջանում սերմանել անպատիժ մնացող պատմական ցցուն անարդարության դեմ ալարկոտ պայքարից ընդարմացած հայրենակիցների հոգիներում: Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» մենաներկայացմամբ 1987-ից նախածեռնած աշխարհապտույտ ուխտագնացությունը Լոնդոնից ու Տորոնտոյից, Մոնրեալից ու Աթենքից, Կիպրոսից ու Բեյրութից հետո հանգրվանել էր կրկին Երևանում:

Մուսալեռցիների հետնորդների տպավորություններով առավել արժանահավատ կենսալիցքերով հարստացած՝ «պարտությունից չհաղթված հայ ժողովրդի» դյուցազներգության հրաշագործ զորությամբ էր փորձում Մարի Ռոզ Աբուսեֆյանը զգաստացնել ու գոտեպնդել իր ժամանակակիցներին: Աշխարհասփյուռ հայության ներկա սերունդներին վիրաբույժի աներկբա հաստատունությամբ ջանում էր ձերբազատել օտարամոլության ախտից՝ լուսավորելով պատմական հիշողության մթամած լաբիրինթոսը ճշմարտության ուժգին լուսարձակումով, խոսքի արվեստի զարմանալի մարտունակությամբ: Հեղինակային իր կարևոր դերակատարությունը ստվարածավալ վեպի հիմնական ասելիքի համատեքստում մերթ տարրալուծելով, մերթ հատու շեշտադրելով՝ գրական հերոսներից քսանի կերպարային փոխհարաբերություններն էր յուրովի զարգացնում: Տարանջատելով գլխավորների մարդկային նկարագրերը ամենաբնութագրական խոշոր վրձնահարվածներով՝ մուսալեռցիների հավաքական կերպարն էր ստեղծում բազմաբարդ ժամանակների պատմական հենքի վրա: Մտերմիկ թատերազրույցի ինքնահատուկ հնարքով ի սկզբանե հոգեհարազատության մթնոլորտ ապահովելով հանդիսասրահում՝ հայոց պահանջատիրության գիտակցությունն էր կարևորում քաղաքական նենգադավ բանսարկությունների մեր ժամանակներում, միաբան ընդվզումը մեր անկախությունը վտանգող մեծ ու փոքր թվացող չարիքների դեմ: Անաչառ ձաղկում էր մեր կրավորական համակերպումը արդի տարատեսակ խեղումներին: ***«Ի՞նչ լավ է, որ Վերֆելը հայ չէր,-*** մտամոլոր ամփոփում էր Պրահայում ծնված ու Կալիֆոռնիայում վաղաժամ մահկանացուն կնքած գերմանալեզու վտարանդի հրեայի տաղանդավոր գրչով հավերժացված հերոսապատման բացառիկ արժեքավորությունը վերստին հիմնավորող խոսքը,- ***այլապես չէր գրվի այս հերոսամարտի կոթողային վավերապատումը»:*** Զերծ մնալով մերկապարանոց քարոզչությունից՝ գեղարվեստական տեսանելի պատկերավորություն էր հաղորդում Մովսեսի լեռան վրա՝ Գաբրիել Բագրատյանի (նախատիպը՝ Մովսես Տեր-Գալուստյան) կազմակերպած ինքնապաշտպանության կենսական նախադրյալների պատճառաբանված ընթացքին: Ծերունի Ռիֆաաթի ու Բագրատյանի բարեկամական զրույցի իմաստնությամբ վկայում նույն հողի վրա դարերով խաղաղ շինականի կյանքով ապրած թուրքի ու հայի հավասարազոր տագնապները արյունռուշտ իշխանավորների իրագործած նույն համիդյան հայահալած քաղաքականության չարագուշակ նախանշաններից: Հպարտությամբ էր հիշատակում Զեյթունը՝ որպես սեպ խրված թուրքական ազգայնամոլության մեջ: ***«Աղոթեցե՛ք, բայց հիշեք, որ Աստծուն էլ պաշտպան է պետք»,-*** Բագրատյանի խոսքերը՝ ուղղված 6 համայնքների հովվապետ Տեր Հայկազունին, որպես հոգևոր ու աշխարհիկ միաձույլ պայքարի մարտակոչ էր հնչեցնում: Ցնծում հայրենի հողի վրա պատանի Ստեփանի աննկատ հայացմամբ, հայդուկային մարտիրոսված կերպափոխությամբ: Անսքող հեգնանքով ներկայացնում էր թուրք բաշիբոզուկների խորհրդանիշ մյուդիրի ծաղրանկարը: Յոթօնոլուքի Հրեշտակապետաց եկեղեցում վերջին պատարագի ծիրում էր ներգրավում հընթացս կենդանացող պատումի խոհազգայական տրամադրությամբ համակվող հանդիսատեսին: Ինքնաբուխ տխրությունը խորացնում էր պարզ մարդկային զգացողություններով: Թանձրացնում վերահաս գերբնական աղետի իրական գույները, երբ լեռը բարձրանալուց առաջ հարազատ տներին էր հրաժեշտ տալիս մոտ 5 հազար հայ շինականների հետ: Մի պահ մուսալեռցիների առաջին հաղթանակի (***«ամոթալի մի բիծ թուրքական վահանի վրա»***) չափազանցված ուրախությամբ հանդիսատեսին զվարթացնելով՝ երկու անգամ դիակների տակ մնալով կյանքը փրկած Սարգիս Կիլիկյանի հակասական վարքագծի (հայկական ամոթալի ախտանիշ) վրա էր կենտրոնացնում անհաստատ հայրենասերների մտասևեռումը: Մանկանում էր 13-ամյա Ստեփանի պատանեկան սխրանքի՝ թուրքական հրանոթը գրավելու պատմությամբ խանդավառվելիս: Հարափոփոխ խոսքի ձայնելևէջներով, կեցվածքով ու բեմական ժլատ անցուդարձով Մարի Ռոզ Աբուսեֆյանը վարակում էր իր խաղին անքթիթ հետևող մտավորական հանդիսատեսին ծանոթ պատմության յուրառոճ մեկնաբանությամբ: Աներևույթ մասնակիցն էր դարձնում բոլոր 36 օրերի դժվարին մաքառմանը (40-ը Վերֆելն էր ընտրել՝ Աստվածաշնչյան խորհրդանիշներ ներմուծելով վեպ): Չանտեսելով Ժուլիեթի և Իսկուհու հանդեպ Բագրատյանի տածած սիրո զգացմունքի նրբին տարբերակումը՝ այդուհանդերձ կենտրոնացնում էր հայրենակիցների միտքը պատերազմի բովով անցած թուրքական բանակի սպայի ունեցած հմուտ ռազմավարության նշանակալից դերի վրա: Իրեն վերապահված առաքելությամբ՝ առերևույթ ֆրանսացած հայը վերագտնում էր ժառանգական կոդում անթեղված լուսեղեն կապը իրեն ծնած ժողովրդի ու հողի հետ: Մուսա լեռան ինքնապաշտպանության առաջին իսկ օրը վերանայում իր անցյալը որպես դժգույն նախերգանքը օրհասական ներկայի: Անձնական դրամայի ներքին խռովքն անկեղծորեն զմռսելով հոգու խորքում՝ փրկարար նավ էր ուղեկցում աներևակայելի պայքարից հյուծվածներին իր կյանքի գնով: Իրեն ապավինած մուսալեռցիների ներքին պառակտումները կասեցնելով՝ կաղնուտի հրդեհմամբ ֆրանսիական զրահանավի տախտակամած էր ուղղորդում (***«Մեր պապենական հողերից ոչ թե պիտի փախչենք, այլ հեռանանք որպես զինվորներ»***) անհավասար մարտերից ու սովից տկարացած չորսուկես հազար մուսալեռցիներին:

Հպարտ խոնարհումով էր Մարի Ռոզ Աբուսեֆյանը մարմնավորում որդու շիրմի առաջ ծնկի եկած Բագրատյանի մահը: Թուրքական դավաճան գնդակից խոցված, որդու խաչափայտը սրտին ընկած:

Զգացմունքների հորձանքից շիկացած հանդիսասրահը, նույն թատերազրույցի հոգեբանական հնարքով, դուրս էր բերում գեղարվեստական խոսքի անզուգական վարպետ արտիստուհին: Կրծքին շողշողացող «Անդրանիկ զորավար» հուշամեդալը (որով նույնանուն հայրենակցական միության նախագահ Նորայր Մուշեղյանը գնահատել էր նաև աբուսեֆյանական հայաստանյան թատերաելույթները բարձր մակարդակով կազմակերպող Գրետա Սահակյանի եռանդուն նվիրումը հայեցի դաստիարակության ազգապահպան գործին) որպես լիակատար փոխըմբռնման փայլուն արտահայտություն են ողջունում բոլոր ներկաները: Եվ Վերֆելի ու նրա վիպասքի գլխավոր հերոսի հավատամքի նազելի, բայց արիական ջահակիր արտիստուհին Մուսա լեռան փրկության ջահը վստահ տանում է Ստեփանակերտ:

Առանց վերամբարձ ճառասացության, հեղինակած մոտ 15 բեմականացումների բյուրեղացող խաղարկմամբ Մարի Ռոզ Աբուսեֆյանը հայապահպանման կրակն է շուրջ 30 տարի բորբոքում: Արևմտահայության ծրագրված սպանդի ոճիրը դատապարտելուն համընթաց մեր գրականության մոռացվող ոսկեղենիկ էջերը փայլուն թատերասեղմագրերով ու մտապահվող մատուցում: Համադրելով պատմական փաստագրության մանրակրկիտ հետազոտությամբ գտնված հարուստ նյութը՝ հայրենասիրության սքանչելի մի դասագիրք է ձևավորում՝ արժանապատիվ գոյապայքարի կենդանի դասագիրք:

Նվարդ ԱՍԱՏՐՅԱՆ

«ԻՐ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ ՕՏԱՐԱՑԱԾ ՄԱՐԴԸ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԴԱՎԱՃԱՆ Է»

Վերջին շրջանում տարբեր ասպարեզներում մեր հայրենակիցների կրած անհաջողությունները, մի տեսակ, հոռետեսական մթնոլորտ էին ձևավորել: Ամենամեծ իրարանցումն առաջ բերեց «Եվրատեսիլում» Հայաստանի ներկայացուցչի ձախողումը։

Այս համատեքստում ուրախալի էր Իսպանիայի ազգային պարերի համաշխարհային մրցույթ-փառատոնում «Կարին» ազգագրական երգի ու պարի համույթի հաղթանակը («Լավագույն պար» անվանակարգում՝ գլխավոր մրցանակ, «Լավագույն երաժշտական և ձայնային նվագակցում»՝ երրորդ մրցանակ):

«Իրատես de facto»-ի հյուրը «Կարին» ազգագրական համույթի գեղարվեստական ղեկավար, ազգագրագետ ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍՅԱՆՆ է:



«Թուրքերը մեր սրբություն սրբոց Կոմիտասից

-Պարոն Գինոսյան, մրցույթին Թուրքիան ներկայացել էր համշենահայերի երգ ու պարով, ինչը Դուք որակել եք Հայոց ցեղասպանության շարունակությունը:

-Ոչ միայն: Նրանց պարային ելույթն սկսվում էր Կոմիտասի բառերով՝ «Առնեմ, երթամ իմ յարը»: Այնպես որ, ոչ միայն համշենահայերի երգն ու պարը, այլև մեր սրբություն սրբոցն իրենց համար մեծ գգրոց է, որտեղից պարբերաբար օգտվում են, մենք էլ իրենց աղբանոցից ենք օգտվում, ցավոք: Եթե թուրքականի անվան տակ ներկայանում է հայկական մշակույթ, կարծում եմ, դա նաև մեր բացթողումն է:

-Իսկ այդ հարցը որևէ կերպ չբարձրաձայնվե՞ց:

-Մենք մեկէջանոց շրջաբերական ներկայացրինք ժյուրիի անդամներին և կազմկոմիտեին, որտեղ նշված էր, թե հայ պարն ինչ մեծ դեր է խաղացել հայ ազգի, նրա հոգեկերտվածքի ձևավորման հարցում (դիվանագիտորեն սխալ կլիներ, եթե միայն համշենահայերի պարը սեփականելու մասին գրեինք): Եվ մի լուրջ մեջբերում արեցինք, որ անգամ Բիբլիական Արարատը, որ ամբողջ աշխարհի համար սրբություն է, պարփակված է Հայկական պար լեռնաշղթայում: Այդքա՛ն արժևորվում է մեզ համար պարը: Նշել էինք նաև, որ մեր ներկայացրած պարերի մեծ մասն Արևմտյան Հայաստանի պարանմուշներ են, և մենք այդ ամենը գրառել ենք 1915-ի եղեռնից մազապուրծ և Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան ճողոպրած հայ տատիկ-պապիկներից: Ցավոք, այսօր իրենց բնօրրանում այս պարերը չեն կատարվում:

Իսկ մեր դեսպանի կինը, ժյուրիի անդամների ներկայությամբ, թուրքական խմբի ղեկավարին, նրանց ելույթից հետո, շնորհակալություն հայտնեց, որ մեր մշակույթը «պահպանում» և «տարածում» են:

-Որքան գիտեմ, նրանք «Գրան պրի» են շահել:

-Երեք անվանակարգում թուրքական խումբը ոչ մի տեղ չէր զբաղեցրել, և բոլորի համար անակնկալ էր, որ «Գրան պրի» շահեցին: Բայց մեր դեսպանը՝ Խորեն Տերտերյանը, նախօրոք զգուշացրել էր, որ Իսպանիան, կարելի է ասել, եվրոպական ամենաթուրքամետ քաղաքականություն վարող երկիրն է, և պետք չէ զարմանալ:

Շատ անգամ նման մրցույթներում զուտ քաղաքական հարցեր են լուծում: Մի մրցույթ, որտեղ ոչ ոք չգիտի՝ ձայների քվեարկությունը ինչպե՞ս է կատարվում, հայտարարված թվերը համապատասխանո՞ւմ են իրականությանը, կարծում եմ՝ չի կարող լուրջ գնահատականի արժանանալ: Իսկական մշակույթը շոու բիզնես չէ, մշակույթը նախ և առաջ ազգային անվտանգության խնդիր է: Իր մշակույթից օտարացած մարդը չի կարող նաև իր հայրենիքին ծառայել: Եթե օտարացել է իր մշակույթից, նշանակում է՝ օտարացել է իր տեսակից, իր երկրից և պոտենցիալ դավաճան է:

-Խոսակցության լուրջ թեմա է դարձել հաջորդ տարի Բաքվում կայանալիք «Եվրատեսիլի» մրցույթին մեր մասնակցել-չմասնակցելու հարցը:

-Այն մարդիկ, ովքեր հանձն են առել Հայաստանը «Եվրատեսիլում» ներկայացնելու գործը, կախվածության մեջ են ֆինանսական և այլ առումներով: Իրենք պետք է որոշեն՝ ի՞նչ կկորցնեն ու ի՞նչ կշահեն գնալ-չգնալու դեպքում:

Ես կարծում եմ, որ լքված ամրոցն անառիկ լինել չի կարող: Փախուստի դիմելը, չգնալն ուղղակի անընդունելի են ինձ համար: Եթե կա մարտահրավեր, այն չընդունելն աներելի է: Այլ բան է, որ պետք է շատ լուրջ մտածել և նաև մշակութային դաշտում ինֆորմացիոն լուրջ պայքար մղել: Ազգային մշակույթը ներկայացնելուց զատ, պետք է հստակ քաղաքականություն տարվի (ոչ միայն տվյալ ելույթի ժամանակ) և ի լուր աշխարհի ասվի, որ թե՛ ադրբեջանցիները, թե՛ թուրքերը հայկական մշակույթից գողացած մշակույթ են կերտել: Եթե մենք պիտի գնանք, սա պետք է օգտագործվի:

Պատկերացրեք ինչեր կխոսեն ադրբեջանցիները, եթե մենք չներկայանանք: Ինձ համար մեծագույն խայտառակություն է, երբ Մոսկվայում հայկական ֆուտբոլային խումբը վախենում և հրաժարվում է ադրբեջանական խմբի հետ խաղալուց: Սա, կարծում եմ, աներելի պարտու-